

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՀԱՆՁԱՆՈՎ ԱՐՍԵՆ ՍԵՐԳԵՅԻ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**Ը.00.01 «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի
պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Մարտիրոսյան Արման Ռուբենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավոյան Սամսոն Աշոտի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Մաթևոսյան Էլյանորա Նորայրի

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 13:30 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. մարտի 15-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տ. գ. թ., դոցենտ՝**



Ա. Տ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ընտրված ուղղության գիտական նշանակությամբ, միջազգայնացման միտումներով, Հայաստանի Հանրապետությունում այս առնչությամբ ներկայացված գիտական վերլուծությունների սակավությամբ, մագիստրոսական թեզերի, թեկնածուական և դոկտորականատենախոսությունների բացակայությամբ: Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվի ցուցանիշների ներդրումը կարող է նպաստել տնտեսական գործունեության համակողմանի հաշվառման իրականացմանը, սովորաբար տնտեսության համակողմանի բացահայտմանն ու կրճատմանը, ֆինանսական և ոչ ֆինանսական, տնտեսական և ոչ տնտեսական հաստատությունների/ինստիտուտների/ գործունեության արդյունավետության բարձրացմանը: Տնտեսության պետական կարգավորման հարցերի հստակեցման, մակրոտնտեսական քաղաքականության մշակման և իրագործման ծրագրեր կազմելու համար շատ կարևոր է ֆինանսական հաշվի ներդրումը մակրոտնտեսական հաշիվների ամբողջականությունն ապահովելու և համալրելու տեսանկյունից:

Ֆինանսական հաշիվն ազգային հաշիվների համակարգում հաջորդական հաշիվների եզրափակիչ հաշիվն է, այն կարևոր գործիք է ֆինանսական հոսքերը վերլուծելու համար և հնարավորություն է տալիս ուսումնասիրել տնտեսական քաղաքականության ֆինանսական արդյունքները և հետևանքները:

Ազգային հաշիվների համակարգի ֆինանսական «բաղադրիչի» հանգամանալից վերլուծության հիման վրա հնարավոր է բնութագրել ՀՀ ինստիտուցիոնալ հատվածների և ենթահատվածների ներդրումային և փոխառության շարժընթացը, ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունները, ինչպես նաև ցույց տալ ֆինանսական ռեսուրսների առկայությունն ինստիտուցիոնալ հատվածում: Այս առումով, տնտեսական անվտանգության տեսանկյունից թույլատրելի ներդրումների ու սպառման ֆինանսավորման ուղիների բացահայտումը տնտեսությունում:

Ատենախոսությունը նվիրված է ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման համակողմանի հետազոտմանը, առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը, քանզի սույն հաշիվն առաջին անգամ է ներդրվում ՀՀ մակրոտնտեսական հաշիվների

համակարգում: Ուստի, վերոգրյալով պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման հիմնախնդիրների ուսումնասիրությունն է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման առանձնահատկությունների բացահայտումն է՝ համապատասխան տեսամեթոդական և գիտագործնական աշխատանքների իրականացմամբ:

Հետազոտության նպատակից բխում են առաջադրված խնդիրները և դրանց լուծման համար անհրաժեշտ քայլաշարի տրամաբանությունը.

- ներկայացնել ազգային հաշիվների համակարգի մակրոտնտեսագիտական բովանդակությունը,
- ուսումնասիրել ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի հիմնական բաղադրատարրերի ներդրման մեթոդաբանությունը,
- վերլուծել մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառությունը, որից բխում է՝
 - Ռուսաստանի Դաշնության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ հատկանիշների բացահայտումը,
 - Ֆրանսիայի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունների վերհանումը,
- Ներկայացնել ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և միջազգային փորձառության տեղայնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում,
- Կիրառելով ֆինանսական հաշիվը որպես մակրոտնտեսական վերլուծության յուրատեսակ գործիք՝ վերլուծել Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգը,
- Կատարելով ֆինանսական հաշվի տնտեսագիտական–մաթեմատիկական վերլուծություն՝ ռեգրեսիոն–կոռելացիոն մոդելավորմամբ ներկայացնել զուտ փոխառության (զուտ վարկավորման) վրա ազդող գործոնները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգն է, իսկ առարկան՝ ֆինանսական հաշիվը և դրան փոխկապակցված մակրոտնտեսական ցուցանիշների ամբողջությունն է, որը կրում է ազգային տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ առանձնահատկությունների ազդեցությունը:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը

Ատենախոսության համար տեսական և մեթոդական հիմք են Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ-2008) և Եվրոպական հաշիվների համակարգ 2010 (ԵՀՀ-2010) մեթոդական ձեռնարկները, ԱՀՀ-ի ֆինանսական հաշվի գծով արտասահմանյան մի շարք գիտնականների կատարած գիտական աշխատանքները, հրապարակումները, գիտավերլուծական նյութերը, ՀՀ օրենքները, ՀՀ ՎԿ խորհրդի որոշումները, իրավական այլ ակտերը, այլ երկրների (Ֆրանսիայի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության) ու միջազգային կազմակերպությունների օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը: Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍ), ՀՀ ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի, միջազգային կազմակերպությունների հրապարակած տվյալները, վիճակագրական, վերլուծական նյութերը, տնտեսագիտական ժողովածուները, ամսագրերը և այլ նյութերը: Գիտական հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, տնտեսամաթեմատիկական, համակարգային, համեմատական, գրաֆիկական վերլուծությունների մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունը ՀՀ ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման տեսական, մեթոդական, ինստիտուցիոնալ կողմերի համալիր հետազոտությունն է, ինչը Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ առաջին փորձն է:

Մասնավորապես գիտական նորույթն ամփոփված է հետևյալ արդյունքներում.

- Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման գործընթացի գնահատման և գործարկման քայլաշարի հիման վրա բացահայտվել են առկա հիմնախնդիրները,

ներկայացվել են դրանց լուծման հիմնարար ուղղությունները՝ հաշվի առնելով տնտեսական զարգացմամբ ինստիտուցիոնալ յուրահատկությունները և տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

- Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության տեղայնացման արդյունքում մշակվել և կազմվել է ֆինանսական հաշվի ներդրման տվյալների աղբյուրների «ճանապարհային» քարտեզ:
- Մակրոտնտեսական տեսանկյունից, ինչպես նաև առանձին ինստիտուցիոնալ հատվածների առումով, դիտարկելով վիճակագրական ցուցանիշների բացարձակ և հարաբերական մեծությունները, դրանց կառուցվածքն ու շարժընթացը, ռեգրեսիոն-կոռելացիոն մոդելավորմամբ հանգամանորեն բացահայտվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի զուտ փոխառության (զուտ վարկավորման) արդյունքային ցուցանիշի վրա ազդող փոխառնչելի գործոնները,
- Մակրոտնտեսական հաշիվների համակարգի առանձնահատկությունների հետահայաց վերլուծության հիման վրա բացահայտվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսական հոսքերի բաշխման ինստիտուցիոնալ մեխանիզմները վարկատու և փոխառու ոլորտների միջև՝ ըստ ֆինանսական գործիքների և տնտեսության հատվածների:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները գործածվում են և հետագայում առավել համապարփակ կարող են օգտագործվել մակրոտնտեսական հաշիվների կառավարման արդյունավետության բարձրացման, հնարավորությունների բացահայտման և կառավարման համարժեք ֆինանսական գործիքների ու մեթոդների ընտրության ու կիրառման, տնտեսությունում ֆինանսական ռեսուրսների կառավարման նպատակայնության բարձրացման և այդ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման համար:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի վերլուծական և հետազոտական աշխատանքներում << ազգային հաշիվների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների

արդյունքային ցուցանիշների վերլուծության և կառավարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների լուծման շրջանակներում:

Ատենախոսության տեսամեթոդական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել ԱՀՀ-ի կուտակման հաշիվներով (կապիտալի հետ գործառնությունների հաշիվ և ֆինանսական հաշիվ) զբաղվող մասնագետների, վերլուծաբանների և հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԵՊՀ-ի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտություն և միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոնում: Աշխատանքում արծարծված տեսամեթոդական հիմնահարցերը քննարկվել են 2019 թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 8-ը ք. Վաշինգտոնում (ԱՄՆ) Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Հաշվեկշիռներ և կուտակման հաշիվներ» թեմայով դասընթացի շրջանակներում, 2020 թ. հունիսի 11-17-ը, դեկտեմբերի 21-23-ը «ECASTAT» ծրագրի ֆինանսական հաշվի ներդրման գծով փորձագետ Սեզիսմունդո Ֆասլերի հետ «Ֆինանսական հաշիվ և հաշվեկշիռ» խորագրով առցանց հարթակում, ինչպես նաև 2021թ. հուլիսի 19-ից օգոստոսի 9-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից առցանց կազմակերպված «Ազգային հաշիվների համակարգի ներածություն (ԱՀՀ-2008)» խորագրով դասընթացին:

Ատենախոսության հիմնադրույթների գծով հրատարակվել են թվով 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 143 էջ, պարունակում է 34 աղյուսակ, 10 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորոյթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման տեսամեթոդաբանական կողմերը»** գլխում իրականացվել է ազգային հաշիվների համակարգի էության, բնութագրիչների, հիմնական մակրոտնտեսական հաշիվների ուսումնասիրություն և վերլուծություն: Դիտարկվել են մակրոտնտեսական հաշիվների հաշվեկշռող հոդվածների հաշվարկման ձևերը, սկզբունքները և փոխառնչությունները: Սույն գլխում վերլուծվել են ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման տեսամեթոդական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները:

1950-ական թվականներն ազգային հաշիվների համակարգման նոր ժամանակաշրջանի սկիզբն է: Քեյնսյան տեսության կողմնակիցները՝ Ռ. Սթոունի հանձնառությամբ¹, Միացյալ Ազգերի Կազմակերպության գործունեության շրջանակներում մշակում են ազգային հաշիվների համակարգի միասնականացման միջազգային չափորոշիչները, որոնց հիման վրա մակրոտնտեսական ցուցանիշների կազմումն ու ներդրումը պարտադիր են դառնում աշխարհի բոլոր երկրների համար: Դա զարգացած և զարգացող երկրների վիճակագրական մարմինների գործունեության արդյունքների միջազգային համադրությունների իրականացման ինստիտուցիոնալ հիմքեր է ձևավորում:

Ազգային հաշիվների համակարգը փոխկապակցված վիճակագրական ցուցանիշների համալիր է, որն ինստիտուցիոնալ տեսանկյունից արտացոլում է տնտեսության մեջ տեղի ունեցող մակրոտնտեսական գործընթացները և նկարագրում է ռեգիոնատ տնտեսավարող միավորների գործունեությունն արտադրության սկզբնական փուլից մինչև արդյունքի վերջնական սպառումը, խնայողությունների կատարման առանձնահատկությունները, կուտակման ուղիները և մի շարք այլ տեսանկյուններից: ԱՀՀ-ի ցուցանիշները մեծ

¹ St' u Stone R., Measurement of national income and the construction of social accounts, United Nation, Geneva, 1947, 5-9 p.

կիրառություն ունեն տնտեսության ինստիտուցիոնալ վերլուծություններում և մակրոտնտեսական մոդելավորման գործընթացում: Դա պարունակում է ինստիտուցիոնալ-մեթոդական ցուցումներ նույնիսկ միջգիտակարգային ուսումնասիրություններ իրականացնող հանրային մասնագետների համար և նպաստում է մակրոտնտեսական հարթությունում կառավարչական որոշումների ընդունմանը: Այս մակրոտնտեսական հաշիվների, հաշվեկշիռների և աղյուսակների ինստիտուցիոնալ փոխկապակցվածությամբ բազմակողմանի հաշվարկային համակարգը հիմնվում է միջազգայնորեն ընդունված դրույթների, սահմանումների, դասակարգումների և կանոնների ամբողջության վրա: Գործնականում, այդ հաշիվները հաջորդական ժամանակահատվածներում կազմելիս պետք է հնարավորինս ապահովել տեղեկատվության անընդհատությունը, որն իրական հնարավորություններ է ընձեռում տնտեսական իրավիճակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության վերլուծությունը»** գլխում ներկայացվել է ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառությունը, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ հատկանիշների վեր հանումն ու բացահայտումը, և Ֆրանսիայի Հանրապետության ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

ՌԴ ԱՀՀ-ում ֆինանսական հաշիվը ձևավորվում է «ումից ում» (From-Whom-to-Whom (FWTW)) մատրիցաների հիման վրա, որոնք բաղկացած են մանրամասն տեղեկատվությունից ինստիտուցիոնալ միավորների տնտեսական փոխհարաբերությունների մասին ֆինանսական գործիքների կտրվածքով: Ֆինանսական հոսքերի և պաշարների մատրիցաները «ումից ում» ձևավորվում են ԱՀՀ-2008 ձեռնարկի մեթոդաբանության հիման վրա²:

ՌԴ ԱՀՀ-ի ֆինանսական հաշիվը, ֆինանսական հոսքերի ուսումնասիրության և կառուցվածքային վերլուծության տեղեկատվական հենք լինելով, թույլ է տալիս ոչ միայն գնահատել տնտեսավարող սուբյեկտների /միավորների/ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների

² St 'u Банк России, Методология формирования финансовых счетов и балансов финансовых активов и обязательств Системы Национальных Счетов Российской Федерации 2019, Москва, 2019 г., с. 16.

կառուցվածքն, այլ նաև բացահայտել ի հայտ եկող ռիսկերը և կուտակված «անհամապատասխանությունները» տնտեսության տարբեր հատվածներում: Դա, ըստ էության, ֆինանսական կայունության պահպանման և մակրոտնտեսական խնդիրների լուծման և կարգավորման կարևորագույն նպատակ է հանդիսանում: Բացի դրանից, այն կարևոր նախադրյալներ է ստեղծում տնտեսության ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների ընդհանուր կառուցվածքի, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմի ազդեցության վերլուծության համար:

Ֆրանսիայի Հանրապետության ԱՀՀ-ի ֆինանսական հաշիվներում առանցքային նշանակություն ունեն Եվրոպական հաշիվների համակարգի 2010 թվականի (այսուհետ՝ ԵՀՀ-2010 (ESA-2010)) միջազգային ձեռնարկի հիմնարար սկզբունքներն ու առանցքային չափորոշիչները: Հարկ է նշել, որ ԵՀՀ-2010 ձեռնարկը, հիմնված է ԱՀՀ-2008 ձեռնարկի մեթոդաբանության հիման վրա, ունի համաեվրոպական գործածություն: Թերևս, պետք է նշել, որ ԵՀՀ-2010 իրավական ակտ է, այն ունի ավելի նեղ մասնագիտական, ճշգրիտ սահմանումներ, դասակարգումներ և նախատեսված է որպես ուղեցույց, մինչդեռ ԱՀՀ-2008 ձեռնարկը պարունակում է ավելի շատ բացատրություններ և հիմնական մեթոդական ցուցումներ: Ֆրանսիայի Հանրապետության³ ԱՀՀ-ի ֆինանսական հաշիվները կազմում է Կենտրոնական բանկը, որը բնութագրում է ինստիտուցիոնալ հատվածների և ենթահատվածների ներդրումային և փոխառության շարժընթացը, ինչպես նաև ցույց է տալիս թե ինչպես են տնտեսության ինստիտուցիոնալ հատվածները կիրառում իրենց ֆինանսական ռեսուրսները, ֆինանսավորում տնտեսության ներդրումներն ու սպառումը:

Ֆրանսիայի ազգային ֆինանսական հաշիվները կազմված են երկու փուլերից.

Առաջին փուլը բաղկացած է բոլոր ինստիտուցիոնալ հատվածների և ֆինանսական գործառնությունների եռամսյակային տվյալների հավաքման, գնահատման և հաշվարկման ենթափուլերից:

³ Ֆրանսիայի Հանրապետության ԱՀՀ-ում ֆինանսական հաշիվ կազմման և ներդրման փորձառության վերլուծության ընտրությունը պայմանավորված է ԵՀՀ-2010 խարսխված ԱՀՀ-ում ֆինանսական հաշիվ կազմման տեղեկատվական բազաների և աղբյուրների արդյունավետ կառավարմամբ, տվյալների բազմազան աղբյուրների առկայությամբ, արդիական մեթատվյալների, գործիքակազմի առանձնահատկություններով, ավելի դետալային մակարդակով ֆինանսական գործիքների և ինստիտուցիոնալ հատվածների, ենթահատվածների գծով դասակարգման, մեթոդական ցուցումների կիրառական նշանակությամբ և այլն:

Երկրորդ փուլը բաղկացած է տվյալների «համաձայնեցման» և մշակման ենթաշրջաններից, որից էլ բխում է տվյալների հորիզոնական և ուղղահայաց համաձայնեցման մեթոդների գործածությունը:

Ազգային ֆինանսական հաշիվները կառուցվում են օգտագործելով «շինարարական բլոկների» մոտեցումը, այլ կերպ ասած՝ փորձագետները հավաքագրում են մանրամասն տվյալներ հիմնական ինստիտուցիոնալ հատվածների բոլոր գործառնություններից, որոնք հիմնված է ձեռնարկ ԵՀՀ-ի 2010 դրույթների վրա: Այնուհետև, տվյալները կազմում են վերլուծական եղանակով, «դետալային մակարդակով»՝ գործածելով հաշվարկային քայլաշար (սահմանափակ նվազեցման սկզբունքի համաձայն), որն ապահովում և հնարավորինս պահպանում է տվյալների սկզբնական կամ նախնական տեսքը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ նշանակությունը Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում»** գլխում իրականացվել է ՀՀ ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման տեղեկատվության աղբյուրների, մեթոդական գնահատման, ինստիտուցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրություն, միջազգային փորձառության տեղայնացման հիմնախնդիրների, դրանց լուծման առաջարկությունների վերհանում: Ներկայացվել է ՀՀ ֆինանսական հաշիվը որպես մակրոտնտեսական վերլուծության գործիք՝ ֆինանսական ցուցանիշների բաշման մեխանիզմն ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների և ֆինանսական գործիքների: Գլխում կատարվել է նաև ՀՀ ԱՀՀ-ի զուտ փոխառության (զուտ վարկավորման) վրա ազդող գործոնների կապի գնահատում՝ կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Հետազոտական աշխատանքների շրջանակներում հստակեցվել է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվի ներդրման համար անհրաժեշտ իրավական հենքը, տեղեկատվության աղբյուրները և մեթոդական գնահատման առանձնահատկությունները: Վերլուծելով առկա տվյալների աղբյուրները, համադրելով ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձը՝ վեր են հանվել որոշ հիմնախնդիրներ:

ՀՀ ԱՀՀ-ում Ֆինանսական հաշվի ներդրման հիմնախնդիրներից են բոլոր տեսակի ձեռնարկությունների ըստ ինստիտուցիոնալ դասակարգման ընդգրկունության ապահովումն է: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է բիզնես ռեգիստրում ընդգրկված բոլոր ինստիտուցիոնալ միավորներն դասակարգել ըստ

տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների՝ համաձայն ԱՀՀ–2008 մեթոդական ձեռնարկի:

Ֆինանսական հաշվի մատրիցայի ներդրման համար անհրաժեշտ է մշակել և գործածել տվյալների աղբյուրների և մեթոդների փաստաթղթավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն իրականացնել տվյալների արդյունավետ կառավարումն ու հասցեականության ապահովումը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է հաշվի առնել Ֆրանսիայի փորձը տվյալների աղբյուրների և մեթոդների փաստաթղթավորման բնագավառում:

Առկա հիմնախնդիրներից է նաև այն, որ ոչ ֆինանսական հատվածում F5 (բաժնետիրական կապիտալ եւ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսեր) և F8 (այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր) ֆինանսական գործիքների գծով փոքր և գերփոքր կազմակերպությունների մասով, ամբողջական տվյալները բացակայում են: Ինչպես ցույց է տալիս Ֆրանսիայի փորձը ֆինանսական հաշվի ներդրման բնագավառում, անհրաժեշտ է կատարել էնդոգեն մեթոդական գնահատումներ (պարզ էքսպոնենցիալ հարթեցում, կրկնակի էքսպոնենցիոնալ հարթեցում, քայլ առ քայլ ավտոռեգրեսիոն մոդելի գործածում, SARIMA մոդելի կիրառում):

Ինստիտուցիոնալ տեսանկյունից, պետք է բիզնես ռեգիստրում հստակեցնել և տարանջատել պետական փայամասնակցություն ունեցող ձեռնարկությունները, «Ձև 3Ֆ» հաշվետվությունների հիման վրա հավաքագրել և ամփոփել պետական մասնակցությամբ կազմակերպությունների տվյալները, որոնք կարևոր տեղեկատվական հենք կհանդիսանան ըստ ֆինանսական գործիքների ինչպես պետական կառավարման հատվածի, այնպես էլ մյուս ինստիտուցիոնալ հատվածների համար:

ԱՀՀ–ում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության տեղայնացման արդյունքում կազմվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաշվի աղբյուրների «ճանապարհային» քարտեզ:

Աղյուսակ 1. ՀՀ ԱՀՀ–ում ֆինանսական հաշվի կազմման տվյալների աղբյուրների «ճանապարհային» քարտեզ^{4,5}

Աղբյուրներ					Պարտավորություններ					
S2	S14+S15	S13	S12	S11	Ֆինանսական գործիքներ	S11	S12	S13	S14+S15	S2
ՎՀ			ՎՀ		F1		ՎՀ			ՎՀ
ՎՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ,	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, Գ	F2		ՎՀ, ՀՀ ԿԲՀ			ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, Հ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	F3	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, ՍՍ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, ՉԼ 3-Ֆ, Հ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, ՉԼ 3-Ֆ	F4	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, ՉԼ 3-Ֆ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ	ՀՀ ԿԲՀ, ՀՀ ՖՆՀ, ՉԼ 3-Ֆ, Հ	ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, ՍՍ, Գ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, ՍՍ, Գ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ Գ	F5	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, Գ, ՊԳ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, ՍՍ, Գ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, ՍՍ, Գ	ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ	ՀՀ ՖՆՀ	ՎՀ	ՀՀ ԿԲՀ	F6		ՎՀ			ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ	ՀՀ ՖՆՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՀՀ ԿԲՀ	F7	ՀՀ ԿԲՀ, Գ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՀՀ ՖՆՀ		ՎՀ
ՎՀ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, Հ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ	F8	ՎՀ, ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ	ՎՀ, ՀՀ ԿԲՀ	ՎՀ, ՉԼ 3-Ֆ, ՀՀ ՖՆՀ	ՀՀ ԿԲՀ, ՉԼ 3-Ֆ, Հ	ՎՀ

Համաձայն ԱՐՄՍՍՍՍ–ի հրապարակած տվյալների՝ 2019 թվականին ՀՀ տնտեսության միակ «զուտ փոխառու հատվածը» ձևավորվել է ոչ ֆինանսական կազմակերպություններից՝ (-442 923.7 մլն դրամ): Վերոգրյալը կարելի է պայմանավորել ոչ ֆինանսական կազմակերպությունների զգալի ծավալների հասնող վարկային պարտավորություններով: Իսկ որպես «զուտ վարկատու հատվածներ» հանդես են եկել ֆինանսական կազմակերպությունների,

⁴ Կազմել է հեղինակը:

⁵ Տե՛ս հապավումները՝

Հ–հաշվարկային մեծություն

Գ–գնահատումներ,

ՄՍ–մնացորդային սկզբունք,

ՎՀ–Վճարային հաշվեկշիռ,

ՀՀ ԿԲՀ–ՀՀ ԿԲ ամփոփ ֆինանսական կազմակերպությունների հատվածի հաշվետվություն,

ՀՀ ՖՆՀ –ՀՀ ֆինանսների նախարարության պետական հատվածի հաշվետվություն,

ՊԳ– ՀՀ պետգույքի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների

հաշվետվություն,

ՉԼ 3-Ֆ –ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի ամփոփ հաշվեկշիռ

պետական կառավարման և տնային տնտեսությունների և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածները՝ արձանագրելով համապատասխանաբար 30 780.3, 4 671.9 և 188 830.2 մլն դրամ⁶:

Տնային տնտեսությունների և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների «զուտ վարկատու հատված» հանդես գալը պայմանավորված է բնակչության զգալի ավանդների և բաժնետիրական կապիտալում փայամասնակցության ծավալների աճով: Ֆինանսական կազմակերպությունների հատվածի կուտակված վարկային միջոցներն, ինչպես նաև պարտքի արժեթղթերի ծավալների աճն ակտիվներում հանգեցրել են ֆինանսական հաշվում ակտիվների գերազանցմանը պարտավորություններին: Պետական կառավարման հատվածը ևս ձևավորել է լրացուցիչ միջոցներ: Դա կարելի է հիմնավորել 2019թ. ՀՀ արդյունավետ տնտեսական քաղաքականությամբ և համախմբված բյուջեի հարկային մուտքերի բարձր աճով: Այսպես՝ 2019 թվականին համախմբված բյուջեի հարկային մուտքերը 2018 թ.-ի (1 384.5 մլրդ դրամ) նկատմամբ աճել են և կազմել 1 614.9 մլրդ դրամ⁷:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ 2019թ. ներքին տնտեսությունը ճանաչվել է զուտ փոխառու երկիր՝ 218.6 մլրդ դրամով⁶: Նկատենք՝ ՀՀ-ն երկար տարիներ եղել և մնում է զուտ փոխառու երկիր, այսինքն՝ ավելի շատ միջոցներ է ներգրավվել, քան «դուրս բերել»: Ընդ որում, 2019 թվականի ֆինանսական հաշվի արդյունքերով ներքին տնտեսության մակարդակով այդ հանգամանքը կարելի է հիմնականում բացատրել ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում վարկային պարտքերի ձևավորումով: Արձանագրենք, որ ֆինանսական կազմակերպությունների, պետական կառավարման և տնային տնտեսությունների և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածները ձևավորել են «լրացուցիչ միջոցներ», որոնք կարող են դառնալ ինչպես տվյալ, այնպես էլ մյուս հատվածների համար արտադրության, շինարարության, հիմնական միջոցների ձեռքբերման, ֆինանսավորման և ներքին ներդրումների հիմնական աղբյուրներ:

⁶ Տե՛ս «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2022», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2022 թ., էջ 66-69, https://www.armstat.am/file/article/finansner_2022_6.pdf

⁷ Տե՛ս «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2021» վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2021 թ., էջ 10, https://www.armstat.am/file/article/finansner_2021_1.pdf

«Ա»-ի զուտ փոխառության (զուտ վարկավորման)՝ որպես արդյունքային ցուցանիշի, և դիտարկող ցուցանիշների՝ «Ա համախառն արտաքին պարտքի ըստ բանկերի, ուղղակի ներդրումների (մասնավոր և առևտրային բանկերի հատվածները) և այլ հատվածների միջև փոխկապվածությունը բացահայտելու համար իրականացվել է կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծություն (SPSS և Eviews ծրագրերի միջոցով):

Բազմակի կոռելացիայի գործակիցն ըստ Չեդոկի սանդղակի կազմել է 0.815, իսկ դետերմինացիայի գործակիցը՝ 0.67, ինչը վկայում է մոդելում ներառված անկախ փոփոխականների՝ արդյունքային փոփոխականի վրա ունեցած ազդեցության մասին:

Ըստ այդմ կազմվել է ռեգրեսիոն մոդելը.

$$\hat{Y} = -97\,549.4 - 1.687X_1 - 0.817X_2 - 1.222X_3$$

Կառուցված ռեգրեսիոն հավասարման փոփոխականների կշռային ազդեցությունները հետևյալն են՝

- $a1 = -1.687$, ինչը նշանակում է, որ այս դեպքում եթե համախառն արտաքին պարտքի «բանկերի (երկարաժամկետ) հատվածը» միջին հաշվով փոփոխվի 1 տոկոսով, ապա զուտ փոխառությունը կնվազի 1.7 տոկոսով,
- $a2 = -0.817$, ինչը նշանակում է, որ այս դեպքում եթե համախառն արտաքին պարտքի «այլ հատվածները» միջին հաշվով փոփոխվեն 1 տոկոսով, ապա զուտ փոխառությունը կնվազի 0.8 տոկոսով,
- $a3 = -1.222$, ինչը նշանակում է, որ այս դեպքում եթե համախառն արտաքին պարտքի «ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկերը» միջին հաշվով փոփոխվեն 1 տոկոսով, ապա զուտ փոխառությունը կնվազի 1.2 տոկոսով:

Ֆինանսական հոսքերի վերլուծությունն ըստ առանձին ինստիտուցիոնալ հատվածների և ֆինանսական գործիքների հնարավորություն է տալիս բացահայտել տնտեսությունում զուտ վարկավորումը կամ զուտ փոխառությունը, ֆինանսական միջոցների բաշխվածության աստիճանը, առանձնահատկությունները, առկա խնդիրները ինչպես առանձին տնտեսության հատվածների, այնպես էլ ամբողջ տնտեսության մակարդակով:

Բացի դրանից, այն հնարավորություն է ընձեռում վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք առկա են ֆինանսական գործիքներում, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հատվածում, ինչպիսին է օրինակ՝ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների կախվածության աստիճանն արտաքին աշխարհից:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների և ստացված գիտական արդյունքների ամփոփման արդյունքում կատարվել են եզրակացություններ և առաջարկություններ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում.

Մակրոտնտեսական հաշիվների կատարելագործման ուղղությամբ էական է Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և միջազգային մի շարք այլ կառույցների դերը: Նրանց ջանքերի շնորհիվ ինստիտուցիոնալ ընդհանրական հիմքեր են ձևավորվում աշխարհի բոլոր երկրների մակրոտնտեսական միջավայրերի միջազգային համադրումների իրականացման համար: Ազգային հաշիվների համակարգն իր մեջ ընդգրկում է տնտեսական գործունեության՝ տնտեսության արտադրական ներուժի, բնակչության բարեկեցության առկա մակարդակի, վերաբերյալ տեղեկատվություն: Այս համակարգի հիմնական գործառույթն անցյալում իրականացված տնտեսական գործունեության առավել համապարփակ ու ամբողջական հաշվառումն է: Դա հնարավորություն է ընձեռում վերլուծել պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, կատարել սցենարային կանխատեսումներ և մշակել համապատասխան ռազմավարություններ: Համակարգի հիմքում տնտեսության բոլոր մակարդակների վերաբերյալ տեղեկատվության ապահովումն է, եկամուտների (ծախսերի) առաջացման, բաշխման, վերաբաշխման և օգտագործման միատեսակ մոտեցումների ձևավորումն է:

Ֆինանսական հաշվի կազմման և ներդրման համար շատ կարևոր է ուսումնասիրել և վերլուծել յուրաքանչյուր ֆինանսական գործիքի գծով ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների (օրինակ՝ վարկային և փոխառության գործառնությունները պետական և ոչ ֆինանսական կազմակերպությունների միջև, կամ արտաքին հատվածի և ֆինանսական կազմակերպությունների գործակցությունը պարտքի արժեթղթերի գծով) հաշվառման մեթոդական սկզբունքները, կանոնները և առանձնահատկությունները: Քանզի դրանով է պայմանավորված ֆինանսական հաշվի ներդրման որակը և մակրոտնտեսական փոխկապակցված հաշիվների հաշվեկշռային արդյունքների հավասարությունը ԱՀՀ-ում:

Համաձայն ԱՀՀ-2008 մեթոդական ձեռնարկի՝ ֆինանսական գործիքների դասակարգման մեջ ընդգրկում են ֆինանսական ակտիվների երկու դաս, որոնց

համար չեն կարող նույնականացվել ինստիտուցիոնալ միավորների համապատասխան ֆինանսական պահանջները: Առաջին դասին վերաբերում են ոսկու ձուլակտորները, որպես ֆինանսական ակտիվ և միջազգային ռեզերվի բաղադրատարր պատկանում են դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմիններին: Ոսկու ձուլակտորի համար չկան համապատասխան թղթակցող պարտավորություններ: Երկրորդ դասին վերաբերում են բաժնետոմսերը, այլ կորպորատիվ արժեթղթերը և մասնակցությունը ֆինանսական կապիտալում: Նրանք չունեն ֆիքսված գնման արժեք, նույնը վերաբերում է նաև այլ ֆինանսական ակտիվներին, բայց դրանք բաժնետերերի պահանջներն են կորպորացիայի կապիտալի զուտ արժեքին:

Ֆինանսական գործիքների դասակարգման մանրամասնեցվածության աստիճանը կախված է ինստիտուցիոնալ հատվածներից: Տնային տնտեսությունների հետ իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է: Մյուս կողմից, ֆինանսական հատվածի կորպորացիաները իրականացնում են գործառնություններ ավելի լայն գործիքների կիրառումով, և տեղեկատվությունը իրենց գործառնությունների վերաբերյալ համարում են ավելի մանրամասն և ժամանակակից՝ այլ ինստիտուցիոնալ միավորների գործառնությունների համեմատությամբ:

Ֆինանսական հոսքերի և պաշարների մատրիցաները ձևավորվում են մեթոդաբանության հիման վրա: Ռ-Դ ֆինանսական հաշիվն ԱՀՀ-ում ձևավորվում են «ումից ում» մատրիցաների հիման վրա (ԱՀՀ-2008 մեթոդական ձեռնարկի), որտեղ հաշվեկշռային դիրքը և ֆինանսական գործառնությունների հատվածները ներկայացված են գործառնության կողմերի կտրվածքով: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ձևավորել հավասարակշռվածություն ֆինանսական հոսքերի մասով՝ ըստ առանձին ֆինանսական գործիքների: Տեղեկատվության բացակայությունը գործառնության կողմի վերաբերյալ «ումից ում» աղյուսակի ցուցանիշները հաշվարկվում է հատվածային հաշիվների և հաշվեկշիռների ունեցած տեղեկատվության ալգորիթմով: Բացի այդ, ստացված տեղեկատվությունը գնահատվում է մնացորդային կամ «համամասնական հաշվարկման» («pro rata») մեթոդով, կիրառվում է նաև հորիզոնական և ուղղահայաց համապատասխանեցում / տվյալների հավասարակշռում:

Ֆրանսիայի Հանրապետության ֆինանսական հաշվի կազմման կարևոր առանձնահատկություններից մեկը տեղեկատվական բազաների և աղբյուրների

արդյունավետ կառավարումն ու հասցեականության ապահովումն է: Ֆրանսիայում ազգային ֆինանսական հաշիվները կառուցելիս փորձագետներն օգտագործում են «շինարարական բլոկների» ներկայացման մոտեցումը՝ նրանք հավաքագրում են մանրամասն տվյալներ հիմնական ինստիտուցիոնալ հատվածների բոլոր գործառնություններից: Այնուհետև, տվյալների բազան կազմելիս «սահմանափակ նվազեցման սկզբունքի» համաձայն գործածական է հատուկ վերլուծական քայլաշարը, որը ձևաբանորեն ապահովում է և հնարավորինս պահպանում է տվյալների նախնական տեսքը: Այս մոտեցումների հիմքում եՎՎ-2010-ի մեթոդական ձեռնարկի հիմնարար տրամաբանությունն է, ըստ որի՝ Ֆրանսիայում «պետականամետ մտածողական առանձնահատկությամբ» ազգային ֆինանսական հաշիվները կազմում են երկու «պարբերությամբ»:

Առաջին պարբերաշրջանում անհրաժեշտաբար պետք է հավաքել, հաշվարկել ու գնահատել բոլոր ինստիտուցիոնալ հատվածների, ֆինանսական գործառնությունների եռամսյակային տվյալները:

Երկրորդ պարբերաշրջանը բաղկացած է տվյալների «համաձայնեցման» և մշակման ենթաշրջաններից, որից էլ և բխում է տվյալների հորիզոնական «դիտարկման» և ուղղահայաց «համադրման» մեթոդների գործածությունը:

Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության տեղայնացման արդյունքում մշակվել և կազմվել է ֆինանսական հաշվի ներդրման տվյալների աղբյուրների «ճանապարհային» քարտեզ:

ՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրումը թույլ տվեց ամբողջացնել ազգային հաշիվների համակարգը և ներկայացնել հաշիվները՝ ըստ ինստիտուցիոնալ հատվածների: Այլ խոսքով, ֆինանսական հաշիվը հնարավորություն ընձեռեց կապել ապրանքների և ծառայությունների արտադրությանը, եկամուտների ձևավորմանը, եկամուտների բաշխմանը, վերաբաշխմանը և օգտագործմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությանը վերաբերող տնտեսության գործունեության արդյունքները ֆինանսական արդյունքների հետ:

Առաջարկություններ: Ֆինանսական հաշվի ներդրման հիմնախնդիրներից են բոլոր տեսակի ձեռնարկությունների ըստ ինստիտուցիոնալ դասակարգման ընգրկունության ապահովումն է: Բիզնես ռեգիստրում ընդգրկված բոլոր ինստիտուցիոնալ միավորներին անհրաժեշտ է դասակարգել ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների: Ըստ այդմ՝ առաջարկվել է բիզնես ռեգիստրը

ընդլայնել՝ ներառելով բոլոր ոլորտների բոլոր տեսակի կազմակերպությունները: Ձեռնարկություններն անհրաժեշտ է դասակարգել ըստ ինստիտուցիոնալ ոլորտների՝ համաձայն ԱՀՀ 2008-ի ուղեցույցների

Առկա հիմնախնդիրներից է նաև այն, որ ոչ ֆինանսական հատվածում «F5» (բաժնետիրական կապիտալ եւ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսեր) և «F8» (այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր) ֆինանսական գործիքների գծով, փոքր և գերփոքր կազմակերպությունների մասով, ամբողջական տվյալները բացակայում են: Ուստի, ինչպես ցույց է տալիս Ֆրանսիայի փորձը ֆինանսական հաշվի ներդնման բնագավառում, առաջարկվել է կատարել էնդոգեն գնահատման մեթոդներ (պարզ էքսպոնենցիալ հարթեցում, կրկնակի էքսպոնենցիոնալ հարթեցում, քայլ առ քայլ ավտոռեգրեսիոն մոդելի գործածում, «SARIMA» մոդելի կիրառում):

Առաջարկվում է բիզնես ռեգիստրում ստորաբաժանել և տարանջատել պետական փայամասնակցություն ունեցող ձեռնարկությունները, «Ձև 3Ֆ» հաշվետվությունների հիման վրա հավաքագրել և ամփոփել պետական մասնակցությամբ կազմակերպությունների տվյալները, որոնք կարևոր տեղեկատվական հենք կհանդիսանան ըստ ֆինանսական գործիքների ինչպես պետական հատվածի, այնպես էլ մյուս ինստիտուցիոնալ հատվածների համար:

Ֆինանսական հաշվի մատրիցայի ներդրման համար անհրաժեշտ է մշակել և գործածել տվյալների աղբյուրների և մեթոդների փաստաթղթավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն իրականացնել տվյալների արդյունավետ կառավարումն ու հասցեականության ապահովումը: Ըստ այդմ, առաջարկվում է հաշվի առնել Ֆրանսիայի փորձը տվյալների աղբյուրների և մեթոդների փաստաթղթավորման բնագավառում:

Ի լրումն, կառուցված ռեգրեսիոն վիճակագրական մոդելում բացահայտվել է փոխկախվածություն հաշվի զուտ փոխառության (զուտ վարկավորում)՝ որպես արդյունքային ցուցանիշի, և ՀՀ համախառն արտաքին պարտքի ըստ հատվածների՝ «բանկերի (երկարաժամկետ)», «ուղղակի ներդրումների՝ միջֆիրմային վարկեր» և «այլ հատվածների»⁸, միջև:

⁸ Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի զուտ փոփոխությունների սույն հատվածում ընդգրկված են այլ ֆինանսական կազմակերպությունները, ոչ ֆինանսական կազմակերպությունները, տնային տնտեսությունները և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները, տե՛ս External debt statistics: guide for compilers and users / Inter-Agency Task Force on Finance Statistics. International Monetary Fund, Washington D.C., 2014, p. 31

Ատենախոսության հիմնական դրույթներն արծարծվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Եղիազարյան Մ., Բունիայան Մ., Օհանջանով Ա., ՀՀ ընկերությունների վճարունակության և ֆինանսական կայունության ցուցանիշների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի, «Եվրոպական համալսարան» գիտական հանդես, 2020 N-1, էջ 319-329,
2. Եղիազարյան Մ., Օհանջանով Ա., Ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առանձնահատկությունները ՀՀ-ում, «Հայկական տնտեսագիտական հանդես», 2020 N-1, էջ 115-124,
3. Եղիազարյան Մ., Օհանջանով Ա., Ֆինանսական հաշվի ներդրման մեթոդական առանձնահատկությունները Ֆրանսիայի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2021 N-3, էջ 241-249,
4. Մարտիրոսյան Ա., Օհանջանով Ա., Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում զուտ փոխառության/զուտ վարկավորման վրա ազդող գործոնների վերլուծությունը, «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», Երևան, 2022 N-2, էջ 55-67,
5. Օհանջանով Ա., Ընկերությունների շահութաբերության բարձրացման ուղիները ՀՀ-ում, «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2019 N-3, էջ 411-418,
6. Օհանջանով Ա., Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի մակրոտնտեսական բնութագիրը և ինստիտուցիոնալ վերլուծությունը, ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, «Գիտություն», 2021 N-1, էջ 120-132,
7. Егиазарян М., Оганджанов А., Анализ макроэкономических показателей счетов операций с капиталом (на примере Республики Армения), «Альтернатива» научный журнал, 2021 N-2, стр. 218-224,
8. Оганджанов А., Финансовый счет как инструмент макроэкономического анализа (на примере Российской Федерации), научный журнал "Управленческий учет", Российская Федерация, 2021 N-12, стр. 183-190,
9. Yeghiazaryan M., Ohanjanov A., Financial account as a tool for macroeconomic analysis (on the example of the Republic of Armenia, "Alternative" quarterly academic journal N-2 · Jul 1, 2022, pp. 46-53,

10. Ohanjanov A., Challenges and Development Prospects of National Accounts of the Republic of Armenia, Finance and accounting scientific journal, «Humk», Yerevan, 2020 N-2, pp. 57-68.

ОГАНДЖАНОВ АРСЕН СЕРГЕЕВИЧ

**ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ
ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ ФИНАНСОВОГО СЧЕТА В СИСТЕМУ
НАЦИОНАЛЬНЫХ СЧЕТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени экономических наук по специальности 08.00.01-“Теория экономической науки и история экономической мысли”.

Защита диссертации состоится 28 апреля 2023г. в 13:30 часов, на заседании специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения, действующего в Ереванском Государственном Университете.
По адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52

РЕЗЮМЕ

Основной информационной базой для анализа важнейших социально-экономических процессов, происходящих в стране, является система национальных счетов (СНС) на основе взаимосвязанных показателей.

Финансовый счет, являясь информационной базой для изучения финансовых потоков и институционального анализа, позволяет не только оценить структуру финансовых ресурсов хозяйствующих субъектов, но и выявлять финансовые риски и «несоответствия» в разных секторах экономики.

Исследование посвящено комплексному исследованию внедрения финансового счета в СНС Республики Армения выявлению и анализу существующих проблем.

Объектом исследования является СНС Республики Армения, а предметом исследования - финансовый счет и связанная с ним совокупность макроэкономических показателей, на которые оказывают влияние институциональные особенности развития национальной экономики.

Целью диссертации является изучение проблем внедрения финансового счета в СНС, а также выявление особенностей внедрения финансового счета в систему макроэкономических показателей Республики Армения с учетом выполнения методических и научных работ.

Для достижения указанной цели в диссертации были поставлены следующие **задачи**:

- Представить макроэкономическую сущность СНС,
- Изучить методологию внедрения основных компонентов финансового счета в СНС,

- Проанализировать зарубежный опыт внедрения финансового счета в СНС,
- Выявить институциональные особенности реализации финансового счета и проблемы локализации международного опыта в СНС Республики Армения,
- Проанализировать компоненты финансового счета СНС РА.
- Провести экономико-математический анализ финансового счета, представить факторы, влияющие на чистое заимствование (чистое кредитование), с помощью корреляционно-регрессионного моделирования.

Основные положения **научной новизны** заключаются в следующем:

1. На основе оценки и реализации этапов процесса внедрения финансового счета в СНС РА, были выявлены проблемы, представлены основные направления их решения с учетом институциональных особенностей экономического развития.
2. В результате локализации международного опыта внедрения финансового счета в СНС РА была разработана и составлена «дорожная карта» источников данных по внедрению финансового счета.
3. С макроэкономической точки зрения, а также с точки зрения отдельных институциональных секторов, учитывая абсолютные и относительные величины статистических показателей, их структуру и тенденции, были выявлены факторы, влияющие на итоговый показатель чистого заимствования (чистого кредитования) СНС РА с помощью корреляционно-регрессионного моделирования.
4. На основе ретроспективного анализа характеристик системы макроэкономических счетов, были выявлены институциональные механизмы распределения финансовых потоков между кредитным и заемным секторами по финансовым инструментам и секторам экономики Армении.

ARSEN SERGEY OHANJANOV

**INSTITUTIONAL FEATURES AND METHODOLOGICAL PROBLEMS OF
INTRODUCING THE FINANCIAL ACCOUNT INTO THE SYSTEM OF
NATIONAL ACCOUNTS OF THE REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.01 “The theory of economic science and the history of economic thought”.

The defense of the dissertation will take place on April 28th, 2023, at 13:30, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 52 Abovyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

The main information base for the analysis of the most important socio-economic processes taking place in the country is the System of National Accounts (SNA) with its basic and interrelated indicators.

The financial account, being an information base for the study of financial flows and institutional analysis, allows not only to assess the structure of financial assets and liabilities of economic entities, but also to identify financial risks and "inconsistencies" in different sectors of the economy.

The study is devoted to the comprehensive research of introducing the financial account in the SNA of the Republic of Armenia, the identification, and the analysis of existing problems.

The object of the study is the SNA of the Republic of Armenia, and the subject of the study is the financial account and the set of macroeconomic indicators related to it, which are influenced by the institutional features of the development of the national economy.

The purpose of the dissertation is to study the problems of introducing the financial account into the SNA, as well as to identify the characteristics of the introduction of the financial account into the system of macroeconomic indicators of the Republic of Armenia, taking into consideration the implementation of methodological and scientific works.

To achieve this goal, the following **research tasks** were identified in the dissertation:

- To present the macroeconomic essence of the SNA,
- To study the methodology for introducing the main components of the financial account in the SNA,
- To analyze the foreign experience of introducing the financial account into the SNA,

- To identify the institutional features of the implementation of the financial account and the problems of localization of international experience into the SNA of the Republic of Armenia,
- To analyze the components of the financial account of the Republic of Armenia
- Conducting an economic-mathematical analysis of the financial account, present the factors affecting net borrowing (net lending) with correlation and regression modeling. The main provisions of **scientific novelty** are as follows:
 1. Based on the evaluation and implementation steps of the financial account introduction process in the SNA of the Republic of Armenia, the existing problems were identified, the fundamental directions of their solution were presented, taking into consideration the institutional peculiarities of economic development and the structural changes of the economy.
 2. As a result of the localization of the international experience of financial account introduction in the system of macroeconomic indicators of the Republic of Armenia, a "road map" of financial account introduction data sources was elaborated and compiled.
 3. According to the macroeconomic point of view, as well as in terms of individual institutional sectors, considering the absolute and relative magnitudes of statistical indicators, their structure, trends, and the factors affecting the result of the net borrowing (net lending) of the SNA RA were identified by correlation and regression modeling.
 4. Based on the retrospective analysis of the characteristics of the system of macroeconomic accounts, the institutional mechanisms of the distribution of financial flows of the Republic of Armenia between the lending and borrowing sectors, according to financial instruments and sectors of the economy, were identified.

